Արձանագրություն 5

**Վարչապետի աշխատակազմի «Սպասարկում» ՊՈԱԿ -ի կարիքների համար «ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի**

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ հունիսի 6-ին 2019թ.

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**

- Ս. Մարկոսյան – Տնօրենի տեղակալ

**Հանձնաժողովի անդամներ՝**

- Ա. Սահակյան – գլխավոր հաշվապահ
- Տ. Սրապիվոնյան – հաշվապահ
- Դ. Ավդալյան- տնօրենի օգնական

**Հանձնաժողովի քարտուղար՝** Ս. Եղիազարյան «Աութսորս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

<u>Օրակարգ</u>

1. <u>Ընթացակարգի հաղթող ճանաչված մասնակիցների մասին</u>

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պատասխան, ըստ որի՝ «Էկոֆորմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 1024 /մեկ հազար քսանչորս/ ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է 6-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

1.2 «Սոֆթ Պապիրուս» ՍՊԸ-ն օրենքով սահմանված կարգով 3 աշխատանքային օրերի ընթացքում ներկայացրել է 15-րդ չափաբաժնի մասով հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերը

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը **որոշեց.**

ա/ «Էկոֆորմ» ՍՊԸ-ից պահանջել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը, այլապես նրա հայտը կմերժվի:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

բ/ ՎԱՍՊ-ԳՀԱՊՁԲ-19/7 ծածկագրով գնման ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է համարվում «Էկոֆորմ» ՍՊԸ-ն, իսկ 15-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է համարվում «Սոֆթ Պապիրուս» ՍՊԸ-ն, որոնց սահմանված կարգով կառաջարկվի կնքել համապատասխան պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

գ/ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ 8-րդ և 15-րդ չափաբաժինների մասով կիրառվում է 5 օրացուցային օր անգործության ժամկետ:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

**Գնահատող հանձնաժողովի նախագահ՝** _____ **Ս. Մարկոսյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** _____ **Ա. Սահակյան**

_____ **Տ. Սրապիվոնյան**

_____ **Դ. Ավդալյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝** _____ **Ս. Եղիազարյան**